

ՀԱՅ ԴԱՏԻ ՅԱՆՁՆԱԿՈՒՄԱԸ ԿԸ ԶԱՆԱՅ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԱԶԱԿՑՈՒԹԻՒՆ ԱՊԱՅՈՒԵԼ ԼԻԲԱՆԱՆԻՆ

Այս շաբաթ Պեյրուբը ցնցած ահաւոր պայթումէն անմիջապէս ետք, Ամերիկայի Դայ դատի յանձնախումբը աշխատանքի լծուեցաւ Սպիտակ տունէն եւ Քոնկրետէն աշակցութիւն ապահովելու համար Լիբանանին:

Այս նպատակով հաստատուած կայքին միջոցով ձեր քաղաքական ներկայացուցիչներուն դիմելու համար այցելել anca.org/Lebanon կայքը:

ՄԱՔՍԱՏԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՆՕՐԷՆ ՊԱՏՐԻ ՏԱՀԵՐ ԵՒ 18 ՈՒՐԻՇՆԵՐ ԿԱԼԱՆԱՒՈՐՈՒԵՑԱՆ ԶԱՆԱԶԱՆ ԵՐԿԻՐՆԵՐ ԿԸ ՓՈՒԹԱՆ ԼԻԲԱՆԱՆԻՆ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԻՒՆ ՀԱՍՅՆԵԼՈՒ

Մայրաքաղաք Պեյրուբը կը շարունակէ արիւնիլ: Ամենուրեք ցաւ, արցունք ու տնքոց:

Մինչ պայթումին նահատակներուն դիակները կը յանձնուին հողին, վիրաւորներ տակաւին կը գտնուին հարուածի զօրութեան տակ, հարիւր հազարաւոր անպատսպար մնացած քաղաքացիներ՝ յուսալքուած ու ցասկոտ:

Երեքշաբթի, 4 օգոստոսէն ի վեր ցնցուած քաղաքացիները տակաւին իրենց առօրեային մէջ կը զգան այդ ցնցումները, ինչպէս նաեւ կը լսեն եւ կը տեսնեն հսկայական պայթումէն երկվայրկեաններ առաջ լսուած օդանաւի ձայներն ու օդանաւը:

Սակայն այդ ձայներն ու պատկերները կը մնան անոնց ակնաչնդներուն եւ յիշողութեան մէջ՝ նկատի ունենալով, որ պետութիւնը ամէն իմաստով, բայց առանց բացառելու, կը ժխտէ այդ պայթումին յարձակումը ըլլալու վարկածը:

Սփոփանքի ոչ մէկ նշոյլ կը շողայ մայրաքաղաքին մէջ՝ հակառակ պայծառ երկինքին վրայ շողացող կիզի արեւուն:

Դրական ներուժ ցոյցանող միակ երեւոյթը աւելը գրկած ու մայրաքաղաքին փողոցները մաքրելու նպատակով փողոց իջած երիտասարդներն էին, որոնք բոլոր շրջաններէն եկած էին զօրակցելու իրենց եղբայր լիբանանցիին, սիրելի մայրաքաղաքին եւ կեանք ոգեշնչող շրջաններուն, յատկապէս ժամկէտի եւ Մար Միայելի:

Հակառակ այս երեւոյթին, տակաւին գիշեր մը առաջ մեծ թիւով խուլիկաններ մայրաքաղաքի փողոցներուն մէջ կատարեցին իրենց ընթացիկ բռնարարները՝ քարկոծելով ապահովութեան ուժերը, հրկիզելով մայրաքաղաքին վաճառատուները, որոնք կարծեք իրենց բաւարար բաժինը չէին ստացած պայթումին բոցերէն:

Անոնց արարքները համագոր էին դիակը, այլ խօսքով՝ մայրաքաղաք Պեյրուբը, կիցով հարուածելու քայլին:



Լիբանանեան բանակի հրամանատար գոր. ժողգէ Լուս երկ այցելեց պայթումին վայրը, ուր հանդիպումներ ունեցաւ բանակի զօրամասերուն, Լիբանանեան Կարմիր խաչին, Զաղաքացիական պաշտպանութեան ուժերուն եւ փրկարար աշխատանքները կատարող տեղական եւ միջազգային բոլոր խմբակներուն հետ:

Ան ստուգեց հողանտական, ռուսական, ֆրանսական, գերմանական, յունական, կիպրական, քաթարեան, չեխական եւ թրքական խմբակներուն աշխատանքները եւ շնորհակալութիւն յայտնեց այդ երկիրներուն, որոնք իսկոյն ընդառաջեցին Լիբանանի կոչին:

Շար.ը՝ էջ 2

ՀՅԴ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՐԱԳՈՅՆ ՄԱՐՄԻՆԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ, ԶՕՐԱՎԻԳ ԿԱՆԳՆԻՆԷ ԼԻԲԱՆԱՆԻՆ ԵՒ ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅՈՒԹԵԱՆԸ

Սիրելի՛ հայրենակիցներ, Օրեր առաջ Պեյրուբում տեղի ունեցած պայթումը Լիբանանին եւ լիբանանահայութեանը պատճառել է մարդկային, բարոյական ու նիւթական հսկայական վնասներ:

Մինչ այս աղետն էլ Լիբանանը գտնուում էր քաղաքական եւ տնտեսական ճգնաժամի մէջ: Աղետն աւելի խորացրեց այն:

Պահն է, որ միասնական ջանքերով լինենք լիբանանահայութեան կողքին եւ մեր նիւթական ու բարոյական օժանդակութեամբ օգնենք մեր քոյրերին եւ եղբայրներին՝ յաղթահարելու այս ճգնաժամը:

ՀՀԴ Հայաստանի Գերագոյն մարմինն իր խորին ցաւակցութիւնն է յայտնում զոհուածների ընտանիքներին, զօրակցում լիբանանահայութեանը եւ կարեւորում է օժանդակութեան ցուցաբերումը միասնական, համահայկական ներգրաւածութեամբ:

Կոչ ենք անում ձեր նիւթական օժանդակութիւնը փոխանցել Մեծի Տան Կիլիկիոյ կաթողիկոսութեան կողմից բացուած Լիբանանի հայութեան օժանդակութեան յատուկ հաշուին՝

ARMENIAN CATHOLICosate OF CILICIA, Bank: Banque pictet & Cie SA, Route des Acacias 60, CH-1211 Geneva 73, Account: M-502039, IBAN: CH61 08755 0502 0390 0300, SWIFT Code: PICTCHGG:

Կամ մասնակցել «Համահայկական հիմնադրամի» կողմից կազմակերպուած հանգանակութեանը՝ հիմնադրամի կայքէջի միջոցով:

Տեղեկացնում ենք նաեւ, որ ՀՀԴ Հայաստանի Գերագոյն մարմինը Նախաձեռնում է օժանդակութեան այլ ծրագրեր, որոնց մասին լրացուցիչ կը տեղեկացնենք հանրութեանը:

ՀՅ ԴԱՆԵԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՐԱԳՈՅՆ ՄԱՐՄԻՆ

«ՏԱՀԵՐ ԿԸ ԸՆՐՈՒՆԱԿԷ ԹՈՒՐԵԱՆ ԻԲՐԵԻ ՈՎՁՄԱԿԱՅԱՆ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ» Կ'ԸՍԷ ՓԵՆԹԵԱԿՈՆ



Միացեալ Նահանգներու պաշտպանութեան նախարարութիւնը ՏԱՀԵՐ-ի վերաբերեալ պատրաստած զեկուցումին մէջ կը նշէ, որ Թուրքիան, փոխանակ ուժեղացնելու ահաբեկչական կազմակերպութեան դէմ պայքարը, ՏԱՀԵՐ-ի համար գումակային, ելեմտական եւ սպառազինութեան տարանցիկ երկիր կը հանդիսանայ:

Քոնկրետին ներկայացուելիք 136 էջոց զեկուցումին մէջ՝ հիմնուելով Եւրոպայի մէջ Միացեալ Նահանգներու հրամանատարութեան տուեալներուն վրայ, կը նշուի, որ Թուրքիան ՏԱՀԵՐ-ի համար դարձած է ռազմակայան:

Չեկուցումին մէջ նաեւ կը նշուի, թէ ՏԱՀԵՐ-ի գումարներու փոխանցումները ապահովելու համար Թուրքիոյ մէջ լիազօրուած են 10-է աւելի կազմակերպութիւններ:

«ԵԳԻՊՏՈՍԻ ԵՒ ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՄԷՁԵՒ ԾՈՎԱՅԻՆ ԻՐԱՎԱՍՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՍԱՀՄԱՆԱՓՈՎԱԿԱՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ԿՆՔՈՒՄԸ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ ԶԻ ԿՐՆԱՐ ՄԵՁ ՄԵՐ ՈՒՂԻԷՆ ՇԵՂԵԼ» Կ'ԸՍԷ ԶԱՒՈՒԾՈՂՈՒ

Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Մելուք Չաւուշօղլու «Անատոլու» լրատու գործակալութեան հետ հարցազրոյցի մը ընթացքին անդրադարձած է Եգիպտոսի եւ Յունաստանի միջեւ կնքուած ծովային իրաւասութիւններու սահմանափակման վերաբերեալ համաձայնագիրին՝ յայտարարելով, որ Թուրքիոյ համար այդպիսի համաձայնագիր չի կրնար գործել:

«Այդպիսի համաձայնագիրները կը խախտեն մեր ցամաքային տարածքն ու իրաւունքները, Յունաստանի եւ Եգիպտոսի միջեւ կնքուած այդպիսի համաձայնագիրը չի կրնար հիմք հանդիսանալ Թուրքիոյ

Շար.ը՝ էջ 4

ԼՈՒՍԱԲԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ՎՆԱՍՆԵՐՈՒ ԶԱՓԱԳՐՈՒՄԻՆ ԵՒ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՏՈՒՅՈՒՄՆԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ

Պուրճ Համուտի բնակիչներուն, Մայրաքաղաքն ու շրջակայքը ցնցած պայթումը կը հանդիսանայ աղետ մը, որ պատճառեց ցաւալի մարդկային կորուստներ եւ նիւթական ծանր վնասներ: Բոլորս գիտենք նիւթական ծանր պայմաններն ու դժուարութիւնները, որոնցմէ կը տառապին հայրենիքն ու ժողովուրդը, անհատներ, ընտանիքներ եւ հաստատութիւններ: Շտապ օգնութեան գերագոյն խորհուրդը յայտարարեց, որ վնասներու չափագրում պիտի կատարէ՝ առ ի պատրաստութիւն հատուցումներու կամ նորոգութեան ծախսերուն մասնակցելու: Առ այդ, մեր բնակչութեան ուշադրութեան կը յանձնենք հետեւեալը.

- Ա.- Շտապ օգնութեան գերագոյն խորհուրդը հաղորդագրութեամբ մը զգուշացուց քաղաքացիները իր անուսով ներկայացողներէն՝ ընդգծելով, որ վնասներու չափագրումը կատարողները իր յանձնախումբերէն եւ լիբանանեան բանակէն կազմուած յստակ խմբակներ են:
- Բ.- Շտապ օգնութեան գերագոյն խորհուրդի աշխատանքները հանգընանային են, եւ սկսած է առաջին փուլը, ուր գիտութեամբ խմբակները վնասներու չափագրում կը կատարեն՝ ապա **թեքնիք** եւ երկրաչափական յանձնախումբեր ստուգումներ կը կատարեն, ամբողջացնելու համար իւրաքանչիւրի հատուցումներու թղթածրարը:
- Վնասներու չափագրումի հոլովոյթը, ըստ Շտապ օգնութեան գերագոյն խորհուրդի յայտարարութեան, հետեւեալն է.-
 - Լիբանանեան բանակին հետ կազմուած յանձնախումբեր կը կատարեն Պեյրուբի նահանգի ստի պայթումէն յառաջացած վնասներու չափագրումը:
 - Քաղաքացիները պետք է լուսանկարներով կամ վիտեոներով փաստագրեն այդ վնասները:
 - Այդ լուսանկարները, անձնաթուղթի պատճենը, նաեւ փաստաթուղթերը, որոնք ցոյց կու տան իրենց իրաւունքը վնասուած յարկաբաժինին, ինքնաշարժին, շէնքին, վաճառատան գծով, իբրեւ սեփականատեր, վարձակալ, կամ այլ ձեւով իրաւատեր, ներկայացնել թաղապետին:
 - Այս բոլորին մասին թաղապետը կը պատրաստէ հաստատագիր մը, որուն մէջ վիրոյիչեալներուն վրայ կ'աւելցնէ բնակչութեան մանրամասն հասցէ եւ հեռաձայնի թիւ:
 - Թաղապետը այս թղթածրարը կը յանձնէ լիբանանեան բանակի չափագրման յանձնախումբերուն, կամ վնաս կրած անձերը ուղղակիօրէն կը յանձնեն այդ խմբակներուն, երբ իրենց մօտ գան:
 - Եթէ կան վնաս կրած անձեր, որոնք կ'ուզեն հատուցումներն առաջ կատարել նորոգութիւնները, պետք է կատարեն վիրոյիչեալը, նաեւ պետք է կցեն պաշտօնական վաճառագիր (**Ֆաթրիկ**) եւ ստացագիրներ, ուր յստակօրէն կը յիշուին կատարուած աշխատանքները, նորոգուած իրերն ու գումարները, որպէսզի գաւտնը ներկայացնեն յիշեալ խմբակներուն:

Կը խնդրուի քաղաքացիներէն իրագրել ըլլալ այս հոլովոյթին՝ պահպանելու համար իրենց իրաւունքները:

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՁ ԼԻԲԱՆԱՆԻ ԳԵՄՊԵՆԱՏԱՆ



«Այսօր» (երէկ՝ 8 օգոստոս, «Ա.») ՀՀԴ Հայաստանի Գերագոյն մարմինի անդամ Շաղիկ Մարուխեանի եւ ՀՀԴ Հայաստանի Գերագոյն մարմինի Հայրենադարձներու յանձնախումբի անդամ Սիմոն Գաֆալեանի հետ այցելեցինք Հայաստանի մէջ Լիբանանի Հանրապետութեան դեսպանատունը, դիմատետրի իր էջին վրայ գրած է ՀՀԴ Հայաստանի Գերագոյն մարմինի անդամ Արծուիկ Միսնասեան:

ՀՀԴ Հայաստանի Գերագոյն մարմինի անդամը նաեւ նշած է. «Արտակարգ եւ լիազօր դեսպան Մայր Տաղերին հետ հանդիպումի ընթացքին ՀՀԴ Հայաստանի Գերագոյն մարմինին անուսով մեր ցաւակցութիւններն ու զօրակցութիւնը յայտնեցինք եղբայրական Լիբանանին:

«Մայր Տաղերը ներկայացուց Պեյրուբի

Շար.ը՝ էջ 4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ ԵՐԵՎԱՆԻ ԻՆՏԵՆՍԻՎՈՒԹՅԱՆ ՄԱՐԿԱՍԻՐԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹԻՒՆ ՊԻՏԻ ՏՐԱՄԱԴՐԷ ԼԻԲԱՆԱՆԻՆ



Վարչապետ Նիկոլ Փաշինեանի գլխաւորութեամբ տեղի ունեցաւ հերթական խորհրդակցութիւնը՝ Հայաստանի կառավարութեան կողմէ Լիբանանի կառավարութեան օժանդակութիւն ցուցաբերելու ուղղութեամբ իրականացուող աշխատանքներուն վերաբերեալ:

Շար.ը՝ էջ 4

ՄԱՔՍԱՏԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՆՕՐԷՆ ՊԱՏՐԻ ՏԱՀԵՐ...

Շարունակում Ա. Էջև

Չոր. Աուն բարձր գնահատեց անոնց աշխատանքները՝ անյայտ կորսուածներու փնտռութիւնն եւ գոհեցաւ դիակները դուրս բերելու իմաստով: Ան յոյս յայտնեց, որ տակաւին կարելի կ'ըլլայ աներակներուն տակէն ողջ քաղաքայիններ գտնել:

Չոր. Աուն ցաւակցութիւն յայտնեց գոհեցաւ ընտանիքներուն, ինչպէս նաեւ շուտափոյոթ ապաքինում մաղթեց վիրաւորներուն:

«Վստահ եղէք, որ լիբանանեան բանակը կարողութիւն ունի իրմէ պահանջուածը եւ բոլոր պարտականութիւնները լիովին կատարելու: Բանակը ոչ մէկ ատեն պիտի զլանայ հայրենիքին ծառայութեան դիմաց: Բանակը լիբանանցիները պիտի չուսալքէ եւ պիտի մնայ անոնց վստահութեան կեդրոնը», շեշտեց զօր. Աուն:

Առաւօտեան փոխվարչապետ, պաշտպանութեան նախարար Չէյա Աքր եւ հանրօգուտ շինութեանց ու փոխադրութեան հարցերու նախարար Միշել Նաժժար այցելեցին Պէյրութի նաւահանգիստ, ուր ստուգեցին կատարուող աշխատանքը:

Ապա անոնք ուղղուեցան զինուորական հիւանդանոց եւ այցելեցին վիրաւոր զինուորներուն:

Աւելի ուշ նախարար Նաժժար՝ ընկերակցութեամբ ճարտարարուեստի նախարար Իմատ Գուպալլայի, ուղղուեցաւ Սայ-



տա եւ Սուր, ուր անոնք ստուգեցին զոյգ շրջաններուն նաւահանգիստները եւ նաւեր դիմաւորելու անոնց կարողութիւնն ու կարելիութիւնները:

Նաժժար եւ Գուպալլա ընդգծեցին Սայտայի եւ Սուրի նաւահանգիստներուն միջեւ գործակցութիւնը համադրելու կարելիութիւնը:

Պէյրութի նաւահանգիստին մնացորդացի մէջ շարունակուեցան հետաքննութիւններն ու փրկարար աշխատանքները, որոնց շնորհիւ կարելի եղաւ անյայտ կորսուած այլ քաղաքայիններու դիակները բացայայտել:

Լիբանանեան բանակը հաղորդագրութեամբ մը հաստատեց, որ Լիբանանեան Կարմիր խաչը միակն է, որ իրաւունք ունի գտնուելու պայթուածի վայրին մէջ՝ գոհեցաւ ու վիրաւորները փոխադրելու համար:

Նաւահանգիստի հսկայական պայթումին հետաքննութեան շրջագիծին մէջ ձեռքարկուածներուն թիւը հասաւ 19-ի: «Էլ. Պի. Սի.» պատկերասփիւռի կայանին համաձայն, **ամուսնիւմ կնիքաթաթ** քիմիական նիւթ ամբարող Պէյրութի նաւահանգիստի թիւ 12 պահեստանոցին մէջ կային նաեւ իրավաւորութեան համար օգտագործուող պայթուցիչներ:

Աւելի ուշ յայտնուեցաւ, որ մաքսատան ընդհանուր տնօրէն Պատրի Տահեր եւս հարցաքննութեան կ'ենթարկուի: Ուշ գիշերին որոշուեցաւ Տահերը կալանաւորել:



Ինքըրփոլ երկէ երկույեան յայտարարեց, որ լիբանանեան իշխանութիւններուն պահանջին ընդառաջելով, միջազգային հետաքննիչներու խմբակ մը պիտի գործուի Լիբանան:

Առողջապահութեան նախարար Զամատ Զասան յայտնեց, որ Պէյրութի նաւահանգիստի պայթումին պատճառած գոհեցումն թիւ բարձրացած է 154-ի, իսկ վիրաւորներուն կը մնայ 5000-ի շուրջ:

Ան նշեց, որ 5000 վիրաւորներուն 20 առ հարիւրը բժշկութեան կարիք ունեցած են՝ անելցնելով, որ լուրջ պարագաները 120 են:

Առողջապահութեան նախարարութիւնը առողջական հարցեր ու բժշկութեան կարիք ունեցող քաղաքացիներուն տրամադրութեան տակ դրաւ 1214 թէժ գիծ:

Իր կարգին, ԵՈՒՆԻՍԵՖ յայտնեց, որ Պէյրութի նաւահանգիստի պայթումին պատճառով անպատսպար մնացած են

100 հազար երեխաներ՝ նկատել տալով, որ անոնցմէ 55 հազարին պատսպարան տրուած է 120 դպրոցներու մէջ:

Շտապ օգնութեան գերագոյն խորհուրդի պետ Մոհամետ Խէյր հարցազրոյցի մը ընթացքին նշեց, որ Պէյրութի մէջ կան 8000 վնասուած կառոյցներ՝ անելցնելով, որ կարելի եղածին չափ արագ պիտի աշխատին՝ վնասներու գնահատումը կատարելու համար:

Նշեց, որ երեսփոխան Շամել Ռուբըզ յետմիջօրէին յայտնեց, որ Չուքի ելեկտրակայանին մէջ կը գտնուի մեծ քանակութեամբ բորակածիս, որ շրջապատուած է նաւթի տակառներով եւ կրնայ Պէյրութի նաւահանգիստի պայթումէն շատ անելի հսկայական պայթում պատճառել:

Ան նշեց, որ այս իրականութիւնը ինք կ'ուզէ ուժանիւթի նախարարին ուշադրութեան յանձնել:

Ուժանիւթի եւ ջուրի հարցերու նախարարութիւնը անմիջապէս հրապարակեց հաղորդագրութիւն մը, որ կը նշէ, թէ Ռուբըզի տեղեկութիւնները անճիշդ են՝ հաստատելով, որ ելեկտրակայանութեան ընկերութիւնը քաղաքացիական անվտանգութիւնը առաջնահերթութիւն կը նկատէ, յատկապէս Չուքի ելեկտրակայանին առումով՝ նկատի ունենալով բնակութեան վայրերուն մօտ ըլլալու իրականութիւնը:

Հաղորդագրութեան մէջ շեշտուեցաւ, որ բորակածիսի պահեստը արդիական ձեւերով եւ ապահով վիճակի մէջ պահուած է, եւ ելեկտրակայանին կը հայթայթէ օդական կարիքին համապատասխանող քանակութեամբ բորակածիս:

ՆԱԽԱԳԱՅ ՍՈՒՆ. «ԱՆԿԱՐԵՒԷ Է, ՈՐ ԻՍ ԻՇԵԱՆՈՒԹԵԱՆՍ ՕՐԵՐՈՒՆ ԵՐԿՐԻՆ ԳԵՐԻՇԵԱՆՈՒԹԻՒՆԸ ԹԻՐԱՆ ԴԱՌԱՅ»

Հանրապետութեան նախագահ զօր. Միշել Աուն երկէ նախագահական պալատին մէջ զրոյց մը ունեցաւ լրագրողներուն հետ:

Չրոյցին ընթացքին նախագահ Աուն հաստատեց, որ լիբանանցիներ բարկացած է՝ Պէյրութի նաւահանգիստի պայթումին պատճառով: «Ես ալ անոր նման բարկացած եմ: Ոչ մէկ ճիգ կը ինչայնք լիբանանցի ժողովուրդին դիմաց ճշմարտութիւնը բացայայտելու: Յետաքննութիւնը պիտի ընդգրկէ բոլոր պատասխանատուները, իսկ միջադրութիւնը կարելի է իրականացնել միայն արդարութեան պարտադրելով: Այս իմաստով դատական իշխանութիւնները իրենց պարտականութիւնները պիտի կատարեն», ըսաւ ան:



Նախագահ Աուն յայտնեց, որ մարդիկ զինք ճանջած են պատերազմը ու խարադրութեան մէջ՝ անելցնելով, որ ոչ ոք կրնայ զինք ընչիս փխալը առաջնորդել, «եւ ոչ ոք կրնայ արգիլել, որ ճշմարտութիւնը բացայայտէ: Դատարաններուն դռները բաց պիտի ըլլան մեծին ու փոքրին դիմաց: Վճիռը ուշացումի պարագային կը դառնայ անիմաստ: Անիկա պէտք է ըլլայ արդար, անմիջական, սակայն առանց աճապարանքի», ըսաւ ան:

Նախագահ Աուն շեշտեց, որ 4 օգոստոսի պայթումը Լիբանանի շրջափակումը իզգած է՝ հաստատելով, որ Պէյրութի վերաշինութիւնը ամէնէն արագ ժամանակամիջոցին պիտի սկսի: «Առաջարկած եմ վնասներ կրած շրջանները բաժնել ակնափսի ձեւով, որ իւրաքանչիւր պետութիւն շրջան մը հոգայ: Պէյրութ շատ անելի գեղեցիկ պիտի դառնայ», յայտնեց ան:

Նախագահ Աուն շեշտեց, որ Լիբանանի տագնապը պիտի չմիջազգայնանայ: «Եթէ լիբանանցիները երկրին չիշխեն, ոչ ոք կրնայ մեզի իշխել: Անկարելի է, որ իմ իշխանութեան օրերուն երկրին գերիշխանութիւնը թիրախ դառնայ», հաստատեց ան:

Նախագահ Աուն հաստատեց, որ Պէյրութ միայն սննդեղէնի եւ բժշկական պիտոյքի կարիք չունի, այլ նաեւ՝ վերաշինութեան:

Ան նշեց, որ Պէյրութի նաւահանգիստի պայթումին հիմնական պատճառը այդ նիւթերուն նաւահանգիստին մէջ գտնուիլն է՝ 7 տարիէ ի վեր, եւ հակառակ բազմաթիւ զգուշացումներուն, պատասխանատուներ անտեսած են եւ անվտանգութիւն ցուցաբերած: Նախագահ Աուն չքացառեց այն հաւանականութիւնը, որ կրնայ արտաքին միջամտութիւն մը՝ հրթիռ մը կամ ռումբ մը, պատճառած ըլլալ այդ պայթումը:

Նախագահ Աուն շեշտեց, որ Ֆրանսայի նախագահ Էմաուէլ Մաքրոնէն պահանջած է Լիբանանի նախագահին արբանեակային նկարներ, որպէսզի կարելի ըլլայ յստակացնել, թէ օդանաւեր եւ հրթիռներ կային: «Եթէ Ֆրանսացիները կարողութիւնն ունենան նման նկարներ տրամադրելու մեզի, ապա այլ պետութիւններէ պիտի խնդրենք զանոնք՝ ճշդելու համար արտաքին յարձակում ըլլալու վարկածը», ընդգծեց ան:

ՍԵՅԻՏ ՆԱՐԱՐԱՆ. «ԿԸ ԳԵՐԵՄ ՆԱՄԻՐԱԳԻՍԻՆ ՍԵՉ ՍԵՉԻ ՊԱՏԿԱՆՈՂ ԵՒՄԻԱԿԱՆ ՆԻԹԵՐՈՒ ԳՈՅՈՒԹԻՒՆԸ»

Չըզպալլայի ընդհանուր քարտուղար Սեյիտ Զասան Նարարայ երկէ երկույեան ժամը 5:30-ին պատկերասփոռած ճառի մը մէջ ցաւակցութիւն յայտնեց պայթումի գոհեցումն ու շուտափոյոթ ապաքինում մաղթեց վիրաւորներուն:

Սեյիտ Նարարալլա յայտնեց, որ Պէյրութի նաւահանգիստը իրենց պատասխանատուութիւնը չէ, այլ՝ Հայֆայի նաւահանգիստը, որովհետեւ անիկա Լիբանանի պաշտպանութեան ռազմավարութիւնն է:

«Կը հերքեմ նաւահանգիստին մէջ մեզի պատկանող քիմիական նիւթերու գոյութիւնը: Յետաքննութիւնը պիտի փաստէ այս իրականութիւնը», ըսաւ ան:

Սեյիտ Նարարալլա շեշտեց, որ եթէ լիբանանեան պետութիւնը արդիւնքի մը ջանքի եւ դատավարութեան չենթարկէ այս թղթածրարին պատասխանատուները, ապա Լիբանանի պետութիւնը վերականգնելու յոյս չկայ:

ԵՆՁԻԹԻ ՊԱՏՐԻԱՐԸ ԱՅՅԵԼԵՑ ՊԵՐՈՒԹ

Անտիոքի եւ համայն կրեւելքի յոյն ուղղափառ համայնքի ետեւանն ժ. Եագիթի պատրիարքը երկէ այցելեց յոյն ուղղափառ համայնքի Պէյրութի առաջնորդարան, ուր ան հանդիպում մը ունեցաւ Էլիաս Աունէ Եպիսկոպոսին հետ:

Ապա ան այցելեց Սեն Ժորժ (Յունական) հիւանդանոց, «Պշարա» դպրոց եւ Պէյրութի Մար Ժըրժոս տաճար, ուր ստուգեց արձանագրուած վնասները:

Եագիթի պատրիարքը հաստատեց, որ իրենց արձանագրուած խրած են այս հողին մէջ եւ հոս ալ պիտի մնան:

Եագիթի պատրիարքը այցելեց նաեւ մարտի համայնքի Պէյրութի առաջնորդ Պուլոս Ապտել Սաթեր Եպիսկոպոսին, որուն հետ քննարկեց նաւահանգիստի պայթումին պատճառած աղետը:

Ապտել Սաթեր Եպիսկոպոս ընդգծեց, որ լիբանանցի պետական ռեւէ պատասխանատու պէտք չէ հանգիստ զգայ, երբ ժողովուրդը ցաւէ կը տնջայ:

ՕԺՆԱԿԱՎՈՒԹԻՒՆԵՐ՝ ՊԵՐՈՒԹԻՒՆ

Լիբանանի կատարուած մարդասիրական օժանդակութիւնները շարունակուեցան նաեւ երկէ:

Օրուան ընթացքին շրջանառութեան մէջ դրուեցան լուրեր, թէ Լիբանան պաշտօնապէս կը մերժէ իրեն առաջարկուած միջազգային օժանդակութիւնները:

Կառավարութեան տեղեկատուական գրասենեակը հրապարակեց հաղորդագրութիւն մը, որ կը նշէ, թէ լիբանանեան պետութիւնը իրեն առաջարկուած ոչ մէկ օժանդակութիւն մերժած է:

Հաղորդագրութիւնը հերքեց շրջանառութեան մէջ դրուած այն լուրերը, թէ օտար պետութիւններու կողմէ Լիբանանին տրամադրուող օժանդակութիւնները կը մերժուին:

Երկույեան Սպիտակ տունը յայտնեց, որ Միացեալ Նաւահանգներու նախագահ Տանկըտ Թրամփ եւ Ֆրանսայի նախագահ Էմաուէլ Մաքրոն ունեցած են հեռաձայնային հաղորդակցութիւն մը, որուն ընթացքին քննարկած են Պէյրութի պայթումին տուր Լիբանանին անմիջական օժանդակութիւն տրամադրելու կարելիութիւնը:

Կես գիշերին նախագահ Միշել Աուն հեռաձայնային հաղորդակցութիւն ստացաւ Միացեալ Նաւահանգներու նախագահ Տոնկըտ Թրամփէն, որ ցաւակցութիւն յայտնեց Պէյրութի նաւահանգիստի պայթումի գոհեցումն համար՝ յայտնելով, որ ինք Նեցուկ կը կանգնի Լիբանանին եւ պիտի մասնակցի Լիբանանի օժանդակութեան Փարիզի խորհրդաժողովին:

Ներքին գործոց եւ քաղաքապետութեանց հարցերու նախարար Մոհամետ Ֆահմի երկէ ուղղուեցաւ Պէյրութի միջազգային օդակայան, ուր շնորհակալութիւն յայտնեց բոլոր պետութիւններուն, որոնք օժանդակութիւններ առաքած են Լիբանան:

Ֆահմի շեշտեց սակայն, որ Լիբանանին տրամադրուած օժանդակութիւններէն անելի կարելի է երկրին քաղաքական ուժերուն միջեւ համախոհութիւնն ու համագործակցութիւնը:

Ան ստանձնեց ակնափսիական մարդասիրական օժանդակութիւնները, ինչպէս նաեւ Լիբանանի մէջ Սեւտական Արաբիոյ դեսպան Ռալփ Պուլիարիի հետ ստանձնեց սեւտական մարդասիրական օժանդակութեան մէկ բաժինը:

Պուլիարի յայտնեց, որ սեւտական օդային կամուրջը յստակ պատգամ է եւ զօրակցական կեցուածք՝ լիբանանցիներուն նկատմամբ:

Պուլիարի հաստատեց, որ Սեւտական Արաբիա միշտ պիտի զօրակցի լիբանանցի ժողովուրդին:

Լիբանանի մէջ Միացեալ Նաւահանգներու դեսպանատունը խոստացաւ Լիբանանին 17 միլիոն տուրալի օժանդակութիւն տրամադրել:

Ամերիկեան դեսպանատունը հաստատեց, որ առաջին օդանաւը 6 օգոստոսին արդէն իսկ հասած է Լիբանան՝ անելցնելով, որ տակաւին կան երկու օդանաւեր, որոնք պիտի հասնին Պէյրութ:

Դեսպանատունը բարձր գնահատեց լիբանանեան բանակին ղեղակատարութիւնը՝ օժանդակութիւններ յանձնելու լիբանանցիներուն:

Միացեալ Նաւահանգներու դեսպան Տորրըժի Շիա յայտնեց, որ Ուաշինկթըն կը շարունակէ նեցուկ կանգնել Լիբանանին, յատկապէս Պէյրութի նաւահանգիստի պայթումին պատճառով ստեղծուած աղետալի պայթումին իբրեւ հետեւեանք:

Քուէյթի առեւտուրի նախարարութիւնը հաստատեց, որ քուէյթեան օժանդակութիւններ փոխադրող օդանաւը պիտի հասնի Լիբանան՝ փոխադրելով սննդեղէն:

Մարդեան հինգ այլ օդանաւեր, իրանեան օդանաւ մը, ինչպէս նաեւ օմանական օդանաւեր երկէ հասան Պէյրութի միջազգային օդակայան՝ լիբանանցիներուն բերելով մարդասիրական օժանդակութիւններ՝ սննդեղէն ու բժշկական պիտոյք:

Խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրի ընդունեց Լիբանանի մէջ Եգիպտոսի դեսպան Եասեր Ալաուին, որ յայտնեց, թէ Եգիպտոսի նախագահ Ապտել Ֆաթթաի Սիսի որոշում տուած է Լիբանանին ամբողջական զօրակցութիւն ցուցաբերելու:

Ալաուի հաստատեց, որ Լիբանանի զօրակցութիւնը պիտի ցուցաբերուի հաստատուելիք օդային կամուրջով, որուն առաջին փուլը արդէն իսկ հասած է՝ փոխադրելով բժշկական պիտոյք:

Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութին իր խօսքը ուղղելով Ռուսիոյ Ապահովութեան խորհուրդին յայտնեց, որ Մոսկուա Լիբանանին յանձնելու զօրակցութիւնն է օժանդակութիւն պիտի տրամադրէ՝ Պէյրութի պայթումէն ետք:

Լիբանանի մէջ Ազրայէճանի դեսպան Ադասելիմ Շիքիլով յայտնեց, որ Ազրայէճանի արտաքին գործոց նախարարութիւնը Լիբանանին մէկ միլիոն տուրալի օժանդակութիւն տրամադրած է:

Նշեց, որ Թուրքիոյ նախագահ Ռեճեփ Թայիփ Էրտողլան հաստատեց, որ Թուրքիա իր ամբողջ կարողութիւնները պիտի գետնել Լիբանանի տրամադրութեան տակ:

Միւս կողմէ, Թուրքիոյ փոխնախագահ Ֆուատ Աքթայ՝ ընկերակցութեամբ արտաքին գործոց նախարար Մելուք Չաւուշօղլուի, այսօր պիտի այցելէ Լիբանան, ուր հանդիպումներ պիտի ունենայ իշխանութեան երեք պետերուն հետ:

Այսօր Լիբանան կ'այցելէ նաեւ Արաբական լիկայի ընդհանուր քարտուղար Ահմետ Ապուլ Ղէյթ:

«ԱԶԴԱԿ»-Ի ՖՈՆԾԻՆ

- «Փէյփալ» ծրագրի միջոցով՝
- Դուր. Կիզնէ Զոյլսէիան (Միացեալ Նաւահանգներ) 1000\$

ԼԻՔԱՆԱՆԻ ՄԵՉ «ՔՈՐՈՆԱ»
ԺԱՀՐՈՎ ՎԱՐԱԿՈՒԹՆԵՐՈՒՆ
ԹԻԻԸ ՀԱՍԱԻ 5951-Ի, ՄԱՀՈՒԲՆ
ՊԱՐԱԳԱՆԵՐՈՒՆԸ՝ 70-Ի,
ԻՍԿ ԱՊԱՔԻՆԱԾՆԵՐՈՒՆԸ՝ 2042-Ի

Առողջապահութեան նախարարութեան տեղեկութիւններուն համաձայն, երկէ Լիբանանի մէջ «Քորոնա» ժահրով վարակուածներուն թիւը հասաւ 5951-ի՝ վերջին 24 ժամուան ընթացքին արձանագրելով 279 նոր վարակուածներ, որոնցմէ 261-ը՝ տեղացիներ, իսկ 18-ը՝ Պէյրութ վերադարձած քաղաքայիններ:

Նախարարութիւնը յայտնեց, որ ցարդ «Քորոնա» ժահրով վարակուած 70 պարագաներ մահացած են, իսկ 2042 ուրիշներ՝ ապաքինած:

ԿՈՉ՝ ԶՕՐԱԿՑԵԼՈՒ ԼԻՔԱՆԱՆԻ ՄԵՐ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐՈՒՆ



Պեյրուքի նաւահանգիստին մէջ 4 օգոստոսին պատահած աղետալի պայթումին պատճառով յառաջացած մարդկային, ընկերային եւ տնտեսական ճգնաժամին ի տես՝ Արեւմտեան Ամերիկայի Դամահայկական խորհուրդը (PAC-WUSA) որոշած է անյապաղ ձեռնարկել շտապ օգնութեան աշխատանքները՝ յատուկ դրամահաւք յայտարարելով Լիբանանի տուժած մեր հայրենակիցներուն հասնելու եւ համայնքի կարիքները հոգալու համար:

Բոլոր նուիրատուութիւնները անմիջապէս եւ ուղղակիօրէն պիտի փոխանցուին Արամ Ա. վեհափառին հովանաւորութեամբ կազմուած համայնքային յանձնախումբին, որ բաղկացած է լիբանանահայ համայնքի կրօնական, քաղաքական եւ բարեգործական գլխաւոր կազմակերպութիւններէն՝ ստացուած գումարները առանց ուշացումի բաշխելու համար:

Օժանդակութիւններ պիտի տրամադրուին հազարաւոր հայրենակիցներու, որոնք սննդամթերքի, ապաստանարանի, բժշկական եւ այլ նպաստներու կարիքը ունին:

Արեւմտեան Ամերիկայի Դամահայկական խորհուրդը կը կ'ուղղէ բոլորին՝ գօտեակոչելու եւ միացեալ ճիգերով զօրակցելու Լիբանանի մեր բոլորներուն եւ եղբայրներուն՝ առատաձեռնօրէն նուիրելով յաջորդ ժամերուն իսկ յայտարարուելից հանգանակութեան:

Աւելին, կը կ'ուղղէք մեր բոլոր հայրենակիցներուն՝ յատուկ ուշադրութեամբ եւ զգուշաւորութեամբ ընտրելու նուիրահաւքային արշաւները, որոնք ընկերային ցանցերու վրայ կը հրամցուին:

Միացեալ կամքով, կազմակերպուած ճիգերով եւ լայն սիրտերով պիտի զօրակցինք լիբանանահայ մեր հայրենակիցներուն:

Արեւմտեան Ամերիկայի Դամահայկական խորհուրդի անդամ կազմակերպութիւններ՝

Հայաստանեայց առաքելական եկեղեցւոյ Արեւմտեան թեմ, Առաջնորդարան Հայոց ԱՄ Նահանգներու Արեւմտեան թեմ, Հիւսիսային Ամերիկայի Հայ Անտարազանական Միութիւն, Հիւսիսային Ամերիկայի Տիրամայր Նարեկի Հայ կաթողիկէ թեմ, Հայ

Շար.ը՝ էջ 4

ԼԻՔԱՆԱՆԻ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ԱԶԱԿՑԵԼՈՒ ԿՈՉ

Հայ օգնութեան միութիւնը խորապէս կը ցաւակցի Լիբանանի մէջ 4 օգոստոսին պատահած աղետալի պատճառով զոհուածներու ընտանիքներուն՝ նշելով. «Մեր աջակցութիւնը կը յայտնենք Լիբանանի ժողովուրդին եւ մեր հայրենակիցներուն, որոնք կրկին անգամ կը գտնուին ծանր պայմաններու մէջ: Հուսաւորաբար ապաքինում կը մտայնենք բոլոր վիրաւորներուն:

ՀՕՍ-ը Լիբանանի եւ լիբանանահայութեան կողքին է, հաստատրիմ մնալով «ժողովուրդիս հետ, ժողովուրդիս համար» սկզբունքին: Միացե՛ք ՀՕՍ-ին, փրկեցե՛ք կեանքերը»:

Նուիրատուութեան համար այցելել <https://ars1910.org/donations/4lebanon/>

ՄԱՀԱՉԳ

Տէր եւ տիկին Լեւոն Չամիչեան եւ ընտանիք
Տէր եւ տիկին Բաքմի Չամիչեան եւ ընտանիք
Տէր եւ տիկին Էտուար Չամիչեան եւ ընտանիք
Տէր եւ տիկին ժորայր Չամիչեան եւ ընտանիք
Տէր եւ տիկին Վիքթոր Չամիչեան եւ ընտանիք
Տէր եւ տիկին Յակոբ եւ Մարի Չալլեքեան եւ ընտանիք
Չամիչեան եւ Գապարեան ընտանիքներ
Ղազարեան եւ Տիմոթէոս ընտանիքներ
եւ համայն ազգականներ կը գումար իրենց հօր, մեծ հօր, եղբոր, հօրեղբոր, մօրեղբոր եւ հարազատին՝

ՄԻՄՈՆ (ՍԵԼԻՍ) ՉԱՄԻՉԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ հինգշաբթի, 6 օգոստոս 2020-ին:
Յուզարկաւորութեան եւ թաղման արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ շաբթի, 8 օգոստոսին, կեսօրէ ետք ժամը 2:00-ին, Պուրճ Չամուտի Հայ կաթողիկէ գերեզմանատան մատրան մէջ:
•Ներկայս ընդունիլ իբրեւ մահազգ:
•Նկատի ունենալով «Քորոնա» ժահրի համաճարակին ստեղծած դժուարութիւնները՝ հանգուցեալին պարագաները ցատկային պիտի ընդունին հեռաձայնով:

ՊՈՒՐԸ ՀԱՍՈՒՏԻ ԱՒԵՐՆԵՐՈՒ ՎԵՐԱՅՄԱՆ ԾԻԳԵՐՈՒ ԾԻՐԻՆ ՄԵՋ

ՀՅԳ ԼԵՍ-ԱՎԱՆՆԵՐ ԵՒ ՈՒԱՐՏԻԵԻ ՍԿԱՌՏՆԵՐ ՄԱՆԱԿՑԵՑԱՆ ՊՈՒՐԸ ՀԱՍՈՒՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՄԱՔՐՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՆ

Երեքշաբթի, 4 օգոստոս 2020-ի երեկոյեան Պեյրուքի նաւահանգիստին մէջ պատահած պայթումին պատճառած աներներուն եւ տխուր տեսարաններուն հետքերը ամօնելու եւ վնասուած թաղամասերու մաքրութեան աշխատանքները արդէն իսկ ընթացք առած են հայկական թէ տեղական պատկան մարմիններուն կողմէ:



Այս ծիրին մէջ ՀՅԳ-ն աջակցութեան Լիբանանի երիտասարդական միութեան (ԼԵՍ) Պուրճ Չամուտի տարբեր մասնաճիւղերու անդամներ փութացին մասնակցելու եւ օգնելու Պուրճ Չամուտի քաղաքապետութեան աշխատանքային բաժանմունքի գործաւորներուն կողմէ կատարուող թաղամասերու մաքրութեան ծիգերուն, յատկապէս՝ փշուած ապակիներու եւ քարակոյտերու վերացման գծով:

Շար.ը՝ էջ 4

ԼՕՍ-Ը՝ ՄԻՇՏ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ԿՈՂՔԻՆ

Սիրելի՛ հայրրդիներ, 4 օգոստոս 2020-ին Պեյրուքի նաւահանգիստին անսպասելի պայթումը ցնցեց ամբողջ Լիբանանը եւ արտասովոր վիճակ մը ստեղծեց ամենուրեք:

Պայթումին հետեանքով ստեղծուած աները, մարդկային ու նիւթական վնասները կարելի չէ բնութագրել բանի մը բառով:

Հակառակ անբնական իրավիճակին եւ աղետալի պայմաններուն, լիբանանահայ օգնութեան խաչը իր ուժերը համարեց եւ փութաց ժողովուրդին: ԼՕՍ-ի Հրշեանային վարչութիւնը, «Արաքսի Պուլուրճեան» ընկերաբժշկական կեդրոնը պատրաստ էին ընդունելու իրենց դիմող բոլոր վիրաւորները: Պարտակալութեան գիտակցութեամբ կեդրոնի բժշկներ եւ անձնակազմի անդամներ, անտեսելով ամեն դժուարութիւն, ջանացին ամբողջով իրենց դիմող հիւանդներուն, պարագաներուն ցուրէրը: Աներուած կեդրոնին մէջ թէ անկէ դուրս մեր բժշկներն ու հիւանդապահները կատարեցին վիրաբուժական ուժեւ տեսակի գործողութիւն: Ծգնածամային եր կացութիւնը: Պէտք էր ամմիջական լուծումներ ապահովել եւ հասնիլ բոլորին անխտիր: Հասնիլ մանուկին, երիտասարդին, տարեցին, ամենէն կարելորը՝ հասնիլ է՛ւ հայրենակիցին, է՛ւ օտարին առանց բացառութեան:

«Արաքսի Պուլուրճեան» ընկերաբժշկական կեդրոնի բժշկական անձնակազմին կողքին պէտք է նշել, որ պայթումին օրն ու անոր յաջորդող օրերուն ԼՕՍ-ին օգնութեան ծեղք երկարեցին շրջաններու մեր դաշնակցական տղաքը, ՀՅԳ Լիբանանի երիտասարդական միութեան մեր ընկերներն ու ընկերուհիները եւ ԼՕՍ-ի մարդասիրական գործունեութեան հաստատացող երիտասարդներն ու երիտասարդուհիները: Անոնք հոն էին խաչուհիներէն առաջ:

Հրշեաններու ակումբներուն ընկերներուն ջանքերով կեդրոնի հասնող հիւանդները ստացան համապատասխան բուժումներ: Կեդրոնի թաղամասին մէջ յառաջացած խուճապին ապահովութիւնը, հիւանդներուն հետ կապը կատարեցին մեր ընկերներն ու ընկերուհիները: Աւելին. անոնք ընկերացան հիւանդանոցներ փոխադրուելու կարիք ունեցող վիրաւորներուն:

«Ժողովուրդէն՝ ժողովուրդին» նշանաբանը ինքզինք պարտադրող իրամայական մըն էր ԼՕՍ-ին համար:

Աղետը մեծ էր, գերբնական ճիգեր պէտք էին՝ դուրս գալու համար անկէ: Եւ այդպէս ալ եղաւ: Աղետի օրն ու յաջորդող օրերուն «Արաքսի Պուլուրճեան» ընկերաբժշկական կեդրոնը ընդունեց 240 պարագաներ, որոնք տրամադրուեցան բժշկական անվճար ծառայութիւններ:

Լիբանանահայ օգնութեան խաչը անգամ մը եւս շրջանցեց յառաջացած անբացատրելի տագնապը: Խաչուհին միշտ պատրաստ է կամաւորաբար ծառայելու ժողովուրդին:

ԼՕՍ-ը միշտ պատրաստ է պատուէջի վրայ ըլլալու եւ ժողովուրդին թիկունք կանգնելու:

ԼԻՔԱՆԱՆԱԿԱՑ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԽԱՉ

ԶՕՐԱԿՑԻՆՔ ԼԻՔԱՆԱՆԻ ՄԵՐ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐՈՒՆ

Պեյրուքը ցնցած ահաւոր պայթումը, իր աներիչ հետեանքներով, ծանր վնասներու ենթարկած է նաեւ հայահոծ շրջանները՝ խլելով մարդկային կեանքեր ու յառաջացնելով բազմաթիւ վիրաւորներ: Մեծ վնասներ կրած են մեր հայրենակիցներու բնակարանները, վաճառատուները, ազգային, միութեանական, կրթական, բարեսիրական ու եկեղեցական կառույցները:

Ըստ մեր քաղած նորագոյն տեղեկութիւններուն, համայնքի կեդրոնական հաստատութիւնները, կուսակցական, միութեանական եւ մամուլի գրասենեակները իրենց ընթացիկ աշխատանքները շարունակելու համար վերանորոգուելու անհրաժեշտութեան տակ կը գտնուին:

Ահաւոր պայթումը եկաւ յաջորդելու Լիբանանի մէջ երկար ժամանակէ ի վեր արդէն ստեղծուած տնտեսական անյաղթահարելի ճգնաժամին, որուն համար ՀՅԳ Յունաստանի Կեդրոնական կոմիտեն է գաղութի ազգային ու միութեանական մարմինները, պիտուէական իրենց դժուարութեան մէջ եւ ներքին հանգանակութեամբ, միասնաբար գոյացուցած էին 10.000 եւրոյի գումար մը, իբրեւ նպաստի խորհրդանշական դոյզն արտայայտութիւն:

Պայթումէն առաւել եւս խորացած տնտեսական ճգնաժամի ներկայ սահմակցուցիչ պայմաններուն մէջ, ամէն մէկ հայու մարդկային եւ ազգային անկետածգելի նուազագոյն պարտքը նկատելով Լիբանանի հայազգադուրթին օգնելու իրամայականը, որոշեցինք ժողովրդային հանգանակութեան ձեռնարկել եւ սրտագին կոչով մը դիմել մեր հայրենակիցներուն, բոլոր ազգայիններուն, որ սրտաբուխ մասնակցին այս դրամահաւքին՝ ստորեւ նշուած դրամատնային հաշիւներու միջոցով:

ԵԹՆՎԻԿ: IBAN GR1801101840000018429600283
Alpha Bank: IBAN GR0201401140114002002005300
Πειραιώς: IBANGR2801720420005042068319229

Կատարուած ամէն նուիրատուութիւն ազնիւ ներդրում է նեցուկ պիտի ըլլայ Լիբանանի մեր հայրենակիցներուն համար:

Սիրելի՛ հայրենակիցներ, Լիբանանի ողբերգութիւնը մեծ է, որմէ անմասն չէ Լիբանանի մեր գաղութը: Ահա թէ ինչո՛ւ համահայկական զօրաշարժը օրահրաման է:

ՅՈՒՆԱՅԱՅՈՑ ԱԶԱԿՑԻՆ ԿԱՐԶՈՒԹԻՒՆ
ՀՅԳ ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ԿԵՂՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ
ՀԱՑ ԿԱՊՈՅՆ ԽԱՉԻ ԸՐԶԱՆԱՅԻՆ ԿԱՐԶՈՒԹԻՒՆ
ՀԱՑ ԳՁՈՒԹԵԱՆ ԽԱՉԻ ԸՐԶԱՆԱՅԻՆ ԿԱՐԶՈՒԹԻՒՆ
ՀԱՄԱԶԱՅԱՅԻՆ ԸՐԶԱՆԱՅԻՆ ԿԱՐԶՈՒԹԻՒՆ
ՀԱՄԱ-Ի ԸՐԶԱՆԱՅԻՆ ԿԱՐԶՈՒԹԻՒՆ
ՀՅԳ ԵՐԻՏՐԱՍՍԱՐԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԿԵՂՈՆԱԿԱՆ ԿԱՐԶՈՒԹԻՒՆ

ՊԵՅՐՈՒԹԸ՝ ԱՒԵՐԱԿ, ԱՐԻՒՆԼՈՒԱՅ ՈՒ ՍԳԱՒՈՐ



Ահ, սարսափ, զարհուրանք ու սոսկում. մահաբեր ցնցում մը շարժեց ամբողջ Լիբանանն ու լիբանանցիները:

Պեյրուքը հիմնայաւորակ է, քարուքանդ, մոխրածածկ, Ո՛Չ ԵՄԱ:

Կարծելի պիտի չըլլայ իշողութենէ ջնջել Պեյրուքը թնդացուցած մահաբոյր պայթիւնը եւ անկէ ծնունդ առած սարսափազդու ալիքը, որ քաղց անելի բան 250 քիլոմետր՝ հասնելով մինչեւ Կիպրոս:

Անբացատրելի երկվայրկեաններ. խառնափնթոր միտքեր ու զգացումներ, զօրաւոր երկրաշարժ, ապա ականջալուր՝ հզօր որոտումի: ԸՆքը կը ճօճուի... Մինչ ոմանք կը ճշան, պապանձած, լոյսի արագութեամբ միտքեր կը փոխուին, երկրաշարժ, ո՞՞մը, միշտ սպաստուող պատերա՞զմ, հրեական օդային յարձակում, շէքի փլուզում... Եւ յանկարծ, արդէն կ'իմանանք պատահածը. աներեակայելի իրավիճակի մատնուած է Պեյրուքը՝ իր բնակիչներով... բառերը բաւարար չեն արտայայտելու վիճակին ահաւորութիւնը: Արիւնլուայ մարդիկ կը փորձեն փութալ կիսաւեր հիւանդանոցներ: Անբացատրելի դժոխային պատկերներ, լաց ու կոծ, աղօթք առ բարձրեալը Աստուած, անժեք, աղաղակ, ճիչ... ամբողջ ժողովուրդի մը ցաւը կը պատկերասփռուի՝ ուղիղ:

Կոկորդս սեղմուած, արցունքներով, զարհուրանքով կը դիտման անճանաչելի դարձած շքեղ Պեյրուքը, արիւնաթաթախ ժողովուրդը, հոս-հոն նետուած դիակները, աներակներու վրայ նստած վիրաւոր ծերունիները, քարուքանդ տուններն ու հիւանդանոցները, ճշագող ծնողներն ու անմեղ մանուկները, փլատակներու տակ թաղուած շնչահեղձները... 10, 20... 63, 73, 100, բարձրանալով՝ 137 կը յայտարարուի գոհերուն թիւը, 80՝ անյայտ կորուսածները, անելի բան 5000՝ վիրաւորները, անելի բան 300.000՝ անտուն մնացողները:

Լիբանանեան, մարդկային, համամարդկային մահաշունչ աղետ մը, երկրի վրայ ստեղծուած դժոխք մը:

Կարծեք Լիբանանի մէջ տիրող տնտեսական աննախադէպ ճգնաժամը, աղքատութիւնը, թշուառութիւնը, անօթութիւնը, անտանջերու հսկայ իրոգիները, լիբանանեան թղթակալի անտրամաբանական արժեզրկումը, սղաճը, անգործութիւնը եւ «Քորոնա» ժահրը չէին բարեւ, ահա աննախընթաց աղետ մը եկած է ամբողջացնելու այս հոգի տանջող արարուները. անկէպ անեղեց մայրաքաղաքը ամբողջութեամբ, մահ ու սարսափ սփռեց ամբողջ Պեյրուքի տարածքին:

Ավթարթի մը մէջ կը կորսնցնես տուն, ընտանիք, ծնորդ, գաւակ կամ ազգական, կը կորսնցնես գործ, կը կորսնցնես ամբողջ կեանքի տքնաշաք աշխատանքի արգասիք, կը կորսնցնես առողջութիւն եւ

ՔՐԻՍՏ ԻՍԿԷՆՏԵՐԵԱՆ

Շար.ը՝ էջ 4

ՄԱՀԱՉԳ

Տիկին Ժամանա Նաճարեան եւ զաւակները՝ Մակայի եւ Միշել-Ժորժ Տէր եւ տիկին Անդրանիկ եւ Ժիլի Տուզճեան եւ զաւակները
Տէր եւ տիկին Դաւիթ եւ Սիւզի Ուրֆալեան եւ զաւակները
Տէր եւ տիկին Ժան-Քրիսթօֆ եւ Թալին Ծիւնիօ եւ զաւակները

Տիկին Սուատ Ուաքիմ
Տէր եւ տիկին Զարլո եւ Հայա Փափալարտո եւ զաւակները

Տիկին Մարիժան Տէրտէրեան եւ զաւակները
Նաճարեան եւ Տուզճեան ընտանիքներ
Ուրֆալեան եւ Ծիւնիօ ընտանիքներ
Տէրտէրեան եւ Սահակեան ընտանիքներ
Տաու եւ Ուաքիմ ընտանիքներ
Փափալարտո եւ Թէոտոր ընտանիքներ
Իմաստունեան եւ Մահտեսեան ընտանիքներ
Բարթամեան եւ Գոլյունճեան ընտանիքներ
Մանուկեան եւ Փանօ ընտանիքներ
Խուրի ընտանիք
եւ համայն ազգականներ կը գումար իրենց ամուսնոյն, հօր, եղբոր, մօրեղբոր եւ հարազատին՝

ՆԱԶԱՐ ՄԻՇԵԼ ՆԱՃԱՐԵԱՆԻ (Ճննալ՝ 1957-ին)

մահը, որ պատահեցաւ երեքշաբթի, 4 օգոստոս 2020-ին, Պեյրուքի նաւահանգիստի պայթումին պատճառով:

Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ շաբթի, 8 օգոստոս 2020-ին, կեսօրու ժամը 12:00-ին, Հայ կաթողիկէ Ս. Եղիա-Ս. Գրիգոր Լուսաւորիչ աթոռանիստ եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխարկուի Պուրճ Չամուտի Հայ կաթողիկէ գերեզմանատունը:

- Ներկայս ընդունիլ իբրեւ մահազգ:
- ԾԱՆՕԹ.- Նկատի ունենալով «Քորոնա» ժահրի համաճարակին ստեղծած դժուարութիւնները, հանգուցեալին ընտանիքը ցատկային պիտի ընդունին հեռաձայնով՝ հետեւեալ թիւերուն ընդմէջէն:
 - ժամանա Նաճարեան՝ 03-191314, Սիւզի Նաճարեան-Ուրֆալեան՝ 03-362014, Ժիլի Նաճարեան-Տուզճեան՝ 03-353819:

